հաւաքեցեալ ի նուիրակութենէ սորին, ի ծոց? Սրբոյ Աթոռոյս։ և մանաւանդ յոյժ սիրող էր սրբ. տանս...»։ Իր տապանագիրն է հետևեալը.

«Այս է տապան հանգստեան Պալաթցի լուսարար Յակոբ վարդապետն Աթոռոյս բազմաշխատ նուիրակի որ հանգեաւ թուին ՌՃՁԸ (= 1739) ընթերցողդ տուք զողորմին»։

Յակոբ վրդ.ի անուամբ 1729 ին Խորհրդատեսր մը, եւ մարգարտաշար ու ոսկեթել եմիփորոն մը կը յիշատակուի Ս. Յակոբ վանքին հետեւեալ յիշատակարանով. «ի վայելումն Պալաթեցի Մհտ. Մելգոնի որդի Յակոբ վրդ.ին բազմաշխատ միաբան Ս. Աթոռոյ... ՌՃՀԸ» (= 1729) (ՄՁ. Թ. 532. Ցուց. Պ.)։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՁԱՆԿՐՑԻ.—Մբ. Զռ. 1811 ին. Նւ. Պաղտատի և Հնդկաստանի (1827—1830)։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՁԻԼԻՆԿԻՐԵԱՆ, ԿԷԼԻՊՕԼՈՒՑԻ.—Մբ. 1821ին իր ծնողաց ուխտի եկած ժամանակ ծնած է Ս. Յակոբի վանքին մէջ. Զռ. 1847ին. Թարգման 1850ին. քննիչ Դամասկոսի մէջ 1855ին. Առ. փոխ. Զմիւռնիոյ 1864ին. անհանդարտ վարքին պատճառով կը վտարուի 1865ին միաբանութենէն. կարգալոյծ 1867ին. թէև բողոքականութեան յարելով՝ բողոքական ալ կ'արձանագրուի. բայց Ազգապետարանը ջնջուած կը նկատէ անոր անունը 1874ին. իբր նորոգիչ եկեղեցւոյ քանի մը համախոհներով կը հիմնէ Լուսաւորչեան անուամբ ընկերութիւն մը և կը հրատարակէ սրբագրեալ Մաշտոց մը։ Յօրինած է Պատմ. Ազգ. երկաւեայ անցից տետրակը։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՊՕԼՈՒՑԻ.—Մբ. Զռ. 1820 ին. Նւ. Կեսարիոյ (1822—24). ապա կարգաթող 1825 ին. և կ'ամուսնանայ Պէրութի մէջ։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՍԱՆԱՍԱՐԵԱՆ, ՎԱՆԵՑԻ.—Մբ. Ռուսաստանի նուիրակ Երեմիա եպս. Տէր Սահակեանի կ'ընկերանայ իբր ըսպասաւոր, եւ անորմէ սարկ. կը ձեռնադրուի Տփխիսի մէջ. Զռ. 1877ին. ՏՓ. (1878—81). ՏԲ. (1881—84). ՏՑ. (1885—87). Բ. անգամ ՏԲ. (1893—94). կը վախճանի 1905ին։ Ս. Յակոբի վանքին յիշատակ կը թողու Ռումելիի երկաթուղւոյ տասնեւեօթը արժէքուղթեր և մթերանոց մը Յոպպէի մէջ։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՍԿԻԻՏԱՐՑԻ.—Մբ. 1816ին Զմիւռնիացի Ճըգ-